ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«12» հոկտեմբեր 2023թ. № 720-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 939-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի «Երկրների միջև փոխանակվող հաշվետվության ձևն ու լրացման կարգը սահմանելու մասին» թիվ 939-Լ հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից սկսած հաշվետու ֆինանսական տարիների վրա:

7/12/2023

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731 ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ * ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2023 թվականի
հուլիսի 12 -ի N 720 -Լ հրամանի

Հավելված
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2022 թվականի
սեպտեմբերի 9-ի N 939-Լ հրամանի

Կ Ա Ր Գ
ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎՆ ՈՒ ԼՐԱՑՄԱՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 1. Կարգավորման առարկան

1.Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է ՀՀ ռեզիդենտ հանդիսացող բազմազգ կազմակերպությունների մասով երկրների միջև փոխանակվող հաշվետվության ձևը, լրացման կարգը, ինչպես նաև հաշվետվության նկատմամբ կիրառվող պահանջները:

Գլուխ 2. Սահմանումներ

1. Սույն կարգի կիրառության իմաստով ստորև նշված հասկացություններն ունեն հետևյալ իմաստն ու նշանակությունը.

1) խումբ՝ ձեռնարկությունների միություն, որոնք փոխկապակցված են սեփականության կամ վերահսկման սկզբունքով այնպես, որ այն պարտավոր է ֆինանսական հաշվետվողականության համար հաշվապահական հաշվառման սկզբունքներին համապատասխան կազմել համախմբված ֆինանսական հաշվետվություններ, կամ պարտավոր էր կազմել այն դեպքում, երբ ձեռնարկություններից որևէ մեկի արժեթղթերը թույլատրված լինեին ֆոնդային բորսայում առևտրին:

2) բազմազգ կազմակերպություն՝ կազմակերպություն, որի անդամ հանդիսացող կազմակերպությունները և (կամ) օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող իրավաբանական կազմավորումները գործունեություն են ծավալում կազմակերպության գրանցման ռեզիդենտության երկրից տարբերվող առնվազն մեկ երկրում:

3) բազմազգ կազմակերպության անդամ կազմակերպություն՝ կազմակերպություն, որը համապատասխանում է հետևյալ պայմաններից որևէ մեկին.

ա) բազմազգ կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող որևէ անդամ կազմակերպություն, որի ֆինանսական հաշվետվությունը դիտարկվում է բազմազգ կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմելիս կամ կարող էր դիտարկվել, եթե այդ անդամ կազմակերպության արժեթղթերը թույլատրված լինեին ֆոնդային բորսայում առևտրին,

բ) բազմազգ կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող որևէ անդամ կազմակերպություն, որի ֆինանսական հաշվետվությունը չի դիտարկվում բազմազգ կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմելիս՝ ելնելով բացառապես այդ կազմակերպության չափերից կամ տվյալների էականության սկզբունքից,

գ) սույն ենթակետի ա) և բ) պարբերություններում նշված կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանում կամ մշտական հաստատություն, որի վերաբերյալ կազմվում են առանձին ֆինանսական հաշվետվություններ՝ ֆինանսական, հարկային կամ այլ տեսակի հաշվետվողականության կամ ներքին վերահսկողության համար:

4) հաշվետու բազմազգ կազմակերպություն՝ բազմազգ կազմակերպության մայր կազմակերպություն:

5) բազմազգ կազմակերպության մայր կազմակերպություն՝ անդամ կազմակերպություն, որը համապատասխանում է հետևյալ պայմաններին.

ա) կազմակերպությունն ուղղակիորեն և (կամ) անուղղակիորեն մասնակցություն ունի բազմազգ կազմակերպության մեկ կամ ավել անդամ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում և այդ մասնաբաժնի չափը բավարար է անդամ կազմակերպությունների վերաբերյալ հարկման նպատակներով իրենց ռեզիդենտության երկրում կիրառվող հաշվապահական հաշվառման սկզբունքներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմելու համար, կամ նման հաշվետվություններ կարող էին կազմվել, եթե հարկման նպատակներով իրենց ռեզիդենտության երկրում կազմակերպության արժեթղթերը թույլատրված լինեին ֆոնդային բորսայում առևտրին, և

բ) բազմազգ կազմակերպության խմբում առկա չէ այլ անդամ կազմակերպություն, որը սույն ենթակետի ա) կետով սահմանված առաջին նշված անդամ կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակիորեն և (կամ) անուղղակիորեն կունենար մասնակցություն:

6) Ֆինանսական տարի՝ տարեկան հաշվետու ժամանակահատված, որի ընթացքում բազմազգ կազմակերպության մայր կազմակերպության կողմից կազմվում է համախմբված տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

7) հաշվետու ֆինանսական տարի՝ ֆինանսական տարի, որի ֆինանսական և գործառնական արդյունքներն արտացոլված են սույն կարգի Չև 1-ով հաստատված երկրների միջև փոխանակվող հաշվետվությունում:

8) իրավասու մարմինների միջև որակավորված համաձայնագիր՝ համաձայնագիր, որը կնքված է միջազգային համաձայնագրի կողմ հանդիսացող երկրների իրավասու մարմինների միջև և պարունակում է այդ երկրների միջև հաշվետվությունների ավտոմատ փոխանակման պահանջ:

9) միջազգային համաձայնագիր՝ «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» (2010 թվականի արձանագրությամբ փոփոխված) կոնվենցիա, այլ երկկողմ կամ բազմակողմ հարկային հարցերով կոնվենցիաներ, կամ այլ հարկային տեղեկատվության փոխանակման համաձայնագիր, որոնց կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը և որոնք իրավական հիմք են հանդիսանում երկրների միջև տեղեկությունների փոխանակման, ներառյալ՝ տեղեկությունների ավտոմատ փոխանակման համար:

10) համախմբված ֆինանսական հաշվետվություններ՝ բազմազգ կազմակերպության ֆինանսական հաշվետվություն, որում բազմազգ կազմակերպության մայր կազմակերպության և այլ անդամ կազմակերպությունների ակտիվները, պարտավորությունները, եկամուտը, ծախսերը և դրամական հոսքերը ներկայացված են որպես մեկ անձի ակտիվներ, պարտավորություններ, եկամուտ, ծախսեր և դրամական հոսքեր:

11) համակարգային խափանում երկրի նկատմամբ՝ երկիրը Հայաստանի Հանրապետության հետ ունի գործող որակավորված համաձայնագիր, սակայն կասեցրել է տեղեկությունների ավտոմատ փոխանակումը (ելնելով այնպիսի հանգամանքներից, որոնք դուրս են համաձայնագրով սահմանված դրույթների կիրառումից) կամ այլ կերպ շարունակաբար չի հաջողել Հայաստանի Հանրապետությանը տրամադրել երկրների միջև ավտոմատ կերպով փոխանակվող իր տնօրինման տակ գտնվող Հայաստանի Հանրապետությունում անդամ կազմակերպություն ունեցող բազմազգ կազմակերպության հաշվետվությունը:

2. Սույն կարգում օգտագործվող սահմանումները կամ հասկացությունները Կարգում սահմանված չլինելու դեպքում ունեն նույն նշանակությունը, ինչ նշանակությամբ դրանք օգտագործվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում:

ԲԱԺԻՆ 2. ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գլուխ 3. Երկրների միջև փոխանակվող հաշվետվության կազմումը և ներկայացումը

1" Սույն Կարգի Ձև 1-ով սահմանված երկրների միջև փոխանակվող հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) հարկային մարմին է ներկայացնում բազմազգ կազմակերպության (այսուհետ՝ ԲԿ) մայր կազմակերպությունը, եթե վերջինս հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն և ԲԿ-ի նախորդ հարկային տարվա արդյունքներով համախառն եկամուտը կազմել է կամ գերազանցել է 750 մլն եվրոն: Հաշվետվությունն անհրաժեշտ է ներկայացնել բազմազգ կազմակերպության հաշվետու ֆինանսական տարվա ավարտից ոչ ուշ, քան 12 ամիս անց: ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն հանդիսացող ԲԿ մայր կազմակերպությունը մինչև հաշվետու ֆինանսական տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացնում ծանուցում՝ ԲԿ մայր կազմակերպություն հանդիսանալու վերաբերյալ: Ծանուցման մեջ անհրաժեշտ է նշել հետևյալ տվյալները.

ա) ծանուցումը ներկայացնող ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն հանդիսացող ԲԿ մայր կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն և գրանցման հասցեն,

բ) եկամտի ստացման տարին:

Ծանուցումը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ տարեկան կտրվածքով:

2. Հաշվետվությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

ա) յուրաքանչյուր երկրում գործունեություն իրականացնող բազմազգ կազմակերպության անդամ կազմակերպությունների եկամուտների, հարկվող շահույթի (վնասի), վճարված շահութահարկի, հաշվարկված շահութահարկի, կանոնադրական կապիտալի, կուտակված (չբաշխված) շահույթի, աշխատողների քանակի, նյութական ակտիվների, բացառությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն,

բ) բազմազգ կազմակերպության յուրաքանչյուր անդամ կազմակերպության անվանումը՝ նշելով տվյալ անդամ կազմակերպության հարկման նպատակով ռեզիդենտության երկիրը, ԲԿ անդամ կազմակերպության գրանցման երկիրը, եթե այն տարբերվում է հարկման նպատակով ռեզիդենտության երկրից և հիմնական տնտեսական գործունեության տեսակ(ներ)ը:

3. Հաշվետվությունը պետք է ներկայացվի սույն Կարգի Ձև 1-ով սահմանված ձևաչափով՝ դրանում արտացոլված սահմանումների կիրառմամբ և լրացման կարգին համապատասխան: Հաշվետվության 1-ին Աղյուսակում ներկայացված գումարները ներկայացվում են ԲԿ-ի համախմբված ֆինանսական հաշվետվության մեջ արտացոլված արտարժույթով, որը նշվում է հաշվետվության 3-րդ Աղյուսակում:

4" Հաշվետու ԲԿ-ն Հաշվետվությունը հարկային մարմին է ներկայացնում հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզվով՝ բացառապես էլեկտրոնային եղանակով:

Գլուխ 4. Երկրների միջև փոխանակվող հաշվետվության կիրառումը և գաղտնիության պահպանումը

1. Հարկային մարմինը կարող է օգտագործել երկրների միջև փոխանակվող հաշվետվությունները բացառապես տրանսֆերային գնագոյացման բարձր ռիսկայնությունը և այլ՝ հարկվող բազայի քայքայմանը և շահույթի տեղափոխմանն առնչվող ռիսկերը Հայաստանի Հանրապետությունում գնահատելու նպատակով, ներառյալ՝ ԲԿ անդամների կողմից կիրառվող տրանսֆերային գնագոյացման կանոնների չպահպանման ռիսկի գնահատումը, ինչպես նաև, եթե կիրառելի է, տնտեսական և վիճակագրական վերլուծություններում: Հարկային մարմնի կողմից իրականացվող տրանսֆերային գնագոյացման ճշգրտումները չեն կարող հիմնվել Հաշվետվությամբ ներկայացված տվյալների վրա:

2. Հաշվետվությամբ ներկայացված տեղեկությունների նկատմամբ կիրառվում են տեղեկությունների գաղտնիության վերաբերյալ «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» (2010 թվականի արձանագրությամբ փոփոխված) կոնվենցիայի դրույթները:

Գլուխ 5. Երկրների միջև փոխանակվող հաշվետվության և ծանուցման ներկայացման կանոնները խախտելը

1. Հաշվետվությունը սահմանված ժամկետներում հարկային մարմին չներկայացնելու դեպքում հարկ վճարողը վճարում է տուգանք՝ տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 10 տոկոսի չափով:

2. Սույն Գլխի 1-ին կետով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, հարկ վճարողի կողմից երկրների միջև փոխանակվող հաշվետվությունը հարկային մարմին չներկայացվելու դեպքում յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ՝ տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 0.04 տոկոսի չափով:

3" ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն հանդիսացող ԲԿ մայր կազմակերպության կողմից մինչև հաշվետու ֆինանսական տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ հարկային մարմին ԲԿ մայր կազմակերպություն հանդիսանալու վերաբերյալ ծանուցում չներկայացնելը չի հանգեցնում ՀՀ օրենսդրությամբ սահմանված վարչական պատասխանատվության:

Ձև 1. Երկրների միջև փոխանակվող հաշվետվություն

Աղյուսակ 1. ԲԿ անդամ կազմակերպությունների կողմից հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում ստացված եկամուտների, շահույթի (վնասի), վճարված շահութահարկի, հաշվարկված շահութահարկի, կանոնադրական կապիտալի, կուտակված շահույթի, աշխատողների թվաքանակի և նյութական ակտիվների (բացառությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքի) մասին տեղեկություններ

ԲԿ-ի անվանումը Հաշվետու տարի Օգտագործված արտարժույթը										
1. Հարկման նպատակով ռեզիդենտության երկիր	2.Եկամուտներ			3. Հարկվող շահույթ (վնաս)	4. Վճարված շահութահարկը	5. Հաշվարկված շահութահարկ	6. Կանոնադրական կապիտալը	7. Կուտակված (չբաշխված) շահույթը	8. Աշխատողների քանակը	9. Նյութական ակտիվները, բացառությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքի
	2.1.Փոխկապակցված չհամարվող կողմ	2.2.Փոխկապակցված կողմ	2.3.Ընդհանուր գումարը							

Աղյուսակ 2. ԲԿ անդամ կազմակերպությունների ցանկն՝ ըստ հարկման նպատակով ռեզիդենտության երկրների

ԲԿ անվանումը՝ Հաշվետու տարի՝															
1.Հարկման նպատակով ռեզիդենտության երկիր	2. ԲԿ անդամ կազմակերպությունները՝ ըստ հարկման նպատակով ռեզիդենտության երկրների	3. ԲԿ անդամ կազմակերպության գրանցման երկիրը, եթե այն տարբերվում է հարկման նպատակով ռեզիդենտության երկրից	4.Հիմնական տնտեսական գործունեության տեսակ(ներ)												
			Գիտահետազոտական և դիզայնային գործունեություն	Մտավոր սեփականություն տնօրինում կամ լիցենզավորում	Գնումների իրականացում	Աղյուսակների ընթերցումը	Վերլուծություններ, մարքեթինգ կամ մասնակցություն	Սպասարկում դրամական կամ դրամական ծառայություններ	Փոխկապակցված չհամարվող կողմերին ծառայությունների մատուցում	Ներխմբային ֆինանսներ	Կարգավորվող ֆինանսական ծառայություններ	Ապահովագրություն	Բաժնեմասերի տնօրինում կամ մասնակցություն այլ գործընկերներում	Ժամանակավոր գործունեություն	Այլ
1.	1.														
	2.														
	3.														
2.	1.														
	2.														
	3.														

Աղյուսակ 3. Լրացուցիչ տեղեկություններ

ԲԿ անվանումը՝ Հաշվետու տարի՝
Պահանջվում է ներառել անհրաժեշտ այլ համառոտ տեղեկություններ կամ բացատրություն, կամ այնպիսի տեղեկություն, ինչն առավել հասկանալի կդարձնի երկրների միջև փոխանակվող հաշվետվությամբ ներկայացված պարտադիր դաշտերում նշված տեղեկությունը:

ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1. Հաշվետվության 1-ին Աղյուսակի՝

1) 1-ին կետում՝ ***հարկման նպատակով ռեզիդենտության երկիր,*** նշվում են այն բոլոր երկրները, որտեղ ԲԿ անդամ կազմակերպությունները հանդիսանում են հարկման նպատակով ռեզիդենտներ: Երկիր կարող է դիտարկվել նաև ցանկացած իրավազորություն: Հաշվետու ԲԿ-ի կողմից առանձին տողով նշվում են նաև ԲԿ բոլոր այն անդամ կազմակերպությունները, որոնք որևէ երկրում չեն համարվում հարկման նպատակով ռեզիդենտ: Այն դեպքում, երբ ԲԿ անդամ կազմակերպությունը հանդիսանում է հարկման նպատակով ռեզիդենտ մեկից ավելի երկրում, ապա հարկման ռեզիդենտության երկիրը որոշելու նպատակով կիրառվում է համապատասխան կրկնակի հարկումը բացառող համաձայնագիրը: Այն դեպքում, երբ առկա չէ կրկնակի հարկումը բացառող համաձայնագիր, ապա ԲԿ անդամ կազմակերպության հարկման նպատակով ռեզիդենտության երկիր կհամարվի ԲԿ անդամ կազմակերպության պետական գրանցման երկիրը:

2) 2-րդ կետում՝ ***եկամուտներ,*** լրացվում են չփոխկապակցված և փոխկապակցված կողմերի հետ գործարքներից ստացված բոլոր եկամուտները և դրանց հանրագումարը, բացառությամբ ԲԿ անդամ կազմակերպությունների շահաբաժինների տեսքով ստացված եկամուտների:

3) 3-րդ կետում՝ ***հարկվող շահույթ,*** լրացվում է ԲԿ բոլոր անդամ կազմակերպությունների հարկման նպատակով ռեզիդենտության երկրներում ստացած հարկվող շահույթի (վնասի) ընդհանուր գումարը:

4) 4-րդ կետում՝ ***վճարված շահութահարկ,*** լրացվում է հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում ԲԿ բոլոր անդամ կազմակերպությունների կողմից վճարված շահութահարկը՝ ինչպես ԲԿ բոլոր անդամ կազմակերպությունների ռեզիդենտության երկրներում վճարված,

այնպես էլ այլ երկրներում հարկային գործակալների կողմից ԲԿ անդամ կազմակերպություններից գանձված և վճարված:

5) 5-րդ կետում՝ ***հաշվարկված շահութահարկ,*** լրացվում է հաշվետու ֆինանսական տարվա համար հաշվարկված, բայց դեռևս չվճարված շահութահարկի գումարը,

6) 6-րդ կետում՝ ***կանոնադրական կապիտալ,*** նշվում է ԲԿ յուրաքանչյուր անդամ կազմակերպության կանոնադրական կապիտալի ընդհանուր գումարը՝ ըստ այդ կազմակերպությունների հարկման նպատակով ռեզիդենտության երկրների:

7) 7-րդ կետում՝ ***կուտակված (չբաշխված) շահույթ,*** նշվում է ԲԿ յուրաքանչյուր անդամ կազմակերպության կուտակված (չբաշխված) շահույթի ընդհանուր գումարը հաշվետու տարվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ այդ կազմակերպությունների հարկման նպատակով ռեզիդենտության երկրների:

8) 8-րդ կետում՝ ***աշխատողների քանակ,*** նշվում է ԲԿ անդամ կազմակերպությունների հետ աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքներ կատարող և (կամ) ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Աշխատողներ) միջին տարեկան քանակը՝ ըստ ԲԿ անդամ կազմակերպությունների ռեզիդենտության երկրների: Աշխատողների միջին տարեկան քանակը որոշվում է տվյալ հարկային տարում յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ կազմակերպության աշխատողների քանակների հանրագումարը հարաբերելով 12-ի, իսկ տվյալ տարում նոր ստեղծված կազմակերպությունների աշխատողների միջին տարեկան քանակը՝ ստեղծման օրվանից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ՝ կազմակերպության աշխատողների քանակների հանրագումարը հարաբերելով կազմակերպության ստեղծման օրվանից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի ամիսների թվի վրա:

9) 9-րդ կետում՝ ***նյութական ակտիվներ, բացառությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքի,*** նշվում է յուրաքանչյուր ԲԿ անդամ կազմակերպության նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ այդ կազմակերպությունների հարկման նպատակով ռեզիդենտության երկրների: Նյութական ակտիվների մեջ չեն ներառվում դրամական միջոցները կամ դրանց համարժեքները, ոչ նյութական կամ ֆինանսական ակտիվները:

2" Հաշվետվության 2-րդ Աղյուսակի՝

1) 1-ին կետում՝ ***հարկման նպատակով ռեզիդենտության երկիր,*** լրացվում է ԲԿ անդամ կազմակերպությունների հարկման նպատակով ռեզիդենտության երկրները:

2) 2-րդ կետում՝ ***ԲԿ անդամ կազմակերպությունների անվանումները՝ ըստ հարկման նպատակով ռեզիդենտության երկրների,*** լրացվում են ԲԿ անդամ կազմակերպությունները՝ ըստ իրենց հարկման նպատակով ռեզիդենտության երկրների:

3) 3-րդ կետում՝ ***ԲԿ անդամ կազմակերպության գրանցման երկիրը, եթե այն տարբերվում է հարկման նպատակով ռեզիդենտության երկրից,*** լրացվում են ԲԿ անդամ կազմակերպությունների գրանցման երկրները, եթե դրանք տարբերվում են հարկման նպատակով ռեզիդենտության երկրից:

4) 4-րդ կետում՝ ***հիմնական տնտեսական գործունեության տեսակը (ները),*** լրացվում են ԲԿ անդամ կազմակերպության կողմից հարկման նպատակով ռեզիդենտության երկրում իրականացվող հիմնական գործունեության տեսակները, ընդ որում կարող են նշվել գործունեության մի քանի տեսակներ:

3" Հաշվետվության 3-րդ Աղյուսակը նախատեսում է լրացուցիչ տեղեկությունների լրացման հնարավորություն՝ օգտագործված տվյալների աղբյուրների, ներկայացված գումարների հաշվարկման մեթոդաբանության համար, ինչպես նաև ցանկացած այլ տեղեկատվություն: